

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ



MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT OF THE REPUBLIC
OF ARMENIA

ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ ГОРИСА

GORIS STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, ք.Գորիս, Ավանգարդ 2

• Республика Армения, г.Горис, Авангард 2

• 2 Avangard st., Goris, Republic of Armenia
(+374 284) 2-27-67, 098 19 67 01
www.gorsu.am, gorissu@mail.ru

№ 01-19/88

«03» 05. 2020թ.

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ,
ՊԱՏՃԵՆԸ՝ ԳՊՀ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ և ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Հարգելի՛ պարոն Հովսեփյան.

23.04.2020 թվականի թիվ 01-19/85 գրությամբ դիմել եմ Ձեզ և առաջարկել եմ գրությունը ստանալուց հետո մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել 2018թվականի հունվարի 1-ից մինչ օրս ԳՊՀ արհեստակցական կազմակերպությանն անդամ հանդիսացող ԳՊՀ աշխատողների գրավոր համաձայնությունները/առանձին, կամ կոլեկտիվ դիմումների տեսքով/, որպեսզի <<Արհեստական միությունների մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի և կոլեկտիվ պայմանագրի պահանջներով կազմակերպի Գորիսի պետական համալսարանի Արհեստակցական կազմակերպության անդամների համար հաշվարկվելիք կամ հաշվարկված ու Գորիսի պետական համալսարանի Արհեստակցական կազմակերպությանը չփոխանցված անդամավճարների գումարների գանձումը և հատկացումը ԳՊՀ արհեստակցական կազմակերպությանը, ինչպես նաև այսուհետ յուրաքանչյուր աշխատավարձի վճարման ժամանակ հաշվարկվի և փոխանցվի նշված անդամավճարները: Միաժամանակ խնդրում եմ նույն ժամկետում տրամադրել Ձեր կողմից հաստատված ցուցակ՝ 2018թվականի հունվարի 1-ից մինչ օրս ԳՊՀ արհեստակցական կազմակերպությանն անդամ հանդիսացող ԳՊՀ աշխատողների վերաբերյալ:

Վերոհիշյալ գրությամբ առաջարկել էի, որպեսզի նշված պահանջները կատարվելու դեպքում քննարկել կոլեկտիվ պայմանագրի ժամկետը երկարաձգելու հարցը և վերջ տալ դատական վիճաբանություններին, իսկ չկատարվելու դեպքում

դադարեցնել կոլեկտիվ պայմանագիրը և հարցին օրենքով սահմանված կարգով ընթացք տալ:

Ի պատասխան ԳՊՀ ռեկտորի 23.04.2020թվականի թիվ 01-19/85 գրության, որն ի դեպ որևէ վիրավորական արտահայտություն ու վիրավորական բառեր չէր պարունակում, Ձեր կողմից ստացել ենք մեղադրական ու վիրավորանքի թեքումով դիմում, մինչդեռ փոխարենը Գործիսի պետական համալսարանը պետք է Ձեզ մեղադրի մի բանի համար, որ դուք առանց աշխատողների համաձայնությամբ փորձում եք ստանալ նրանց աշխատավարձերի մեկ տոկոսը, անտեսելով <<Արհեստական միությունների մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի և կոլեկտիվ պայմանագրի պահանջները, հաշվի չէք առել նաև անմեղության կանխավարկածի սկզբունքը և Ձեզ իրավունք եք վերապահել հանդես գալ իրավապահ մարմինների անունից, ինչի իրավունքը Դուք չունեք, ավելին, ԳՊՀ աշխատակիցներից շատերի մոտ հարց է առաջացել, թե Ձեր ներկայացրած Գործիսի պետական համալսարանի արհեստակցական կազմակերպության անդամի ցուցակում ինչու⁷ է իրենց անունները զետեղված, քանի որ նրանք անդամագրվելու դիմումներ չեն ներկայացրել Ձեզ, ստացվում է, որ Դուք փորձում եք տպավորություն ստեղծել, թե իբր պաշտպանում եք աշխատողների շահերը, միաժամանակ իրենց շահերին հակառակ գործողություններ եք իրականացնում, մասնավորապես պահանջում եք, որ նրանց աշխատավարձերից բռնագանձեմ և Ձեզ տրամադրեմ անդամավճարներ այն դեպքում, երբ անգամ կազմակերպության անդամ չեն հանդիսանում: Ավելին, այդ ողջամիտ կասկածն առաջացել է այն ժամանակ, երբ ԳՊՀ կառավարման խորհրդի նիստի ժամանակ Ձեզանից պահանջվել է ներկայացնել դիմումներն ու ցուցակները, սակայն Դուք չէք ներկայացրել դրանք՝ տարբեր պատճառաբանություններով: Իսկ դատարանի վճռի կատարման մասին իրավունք չունեք խոսալու, քանի որ չկա օրինական ուժի մեջ մտած վճիռ, որով ԳՊՀ-ն ունի որևէ պարտավորություն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ անհիմն չէք կատարել 23.04.2020 թվականի թիվ 01-19/85 գրության պահանջները, ուստի նոր կոլեկտիվ պայմանագիր կնքելու համար բանակցությունները հետաձգվում են, մինչև կպարզվի ԳՊՀ արհեստակցական կազմակերպությանն անդամների իրական ցուցակը և նրանց դիրքորոշումներն իրենց աշխատավարձից մասհանումներ կատարելու վերաբերյալ:

ԳՊՀ-ն միշտ էլ կանգնել է իր աշխատողների և ուսանողների կողքին, իսկ Դուք կոլեկտիվ պայմանագրի պահանջները կատարելու փոխարեն դիմել եք դատարան, որ կարելի էր արտադատական կարգով լուծվեր այդ ամենը, ինչը բնականաբար համալսարանի շահերից կբխեր, սակայն Դուք ընտրեցիք համալսարանի ռեկտորին վարկաբեկելու և անհիմն մեղադրելու ուղին, ինչը, կարծում եմ, անձնական բնույթ է կրում, քանի որ լուծվել է Ձեր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը, և դատարանը Ձեզ չի վերականգնել նախկին աշխատանքում /թիվ ՍԴ3/0326/02/18 քաղաքացիական գործ/:

Ձեզ հնարավորություն է տրվել խաղաղ ճանապարհով լուծելու հարցերը, սակայն Դուք դիմումներն ու հաստատված ցուցակը ներկայացնելու փոխարեն այլ բովանդակության նամակ եք ուղարկել համալսարան:

Միաժամանակ զգուշացնում եմ այսուհետև կոռեկտ գրություններ հղել համալսարանի անունով, եթե Դուք իրոք մտահոգ եք համալսարանի ճակատագրով, իսկ Ձեր ընտրած ուղին ձախողված է, քանի որ հանրությանը պարզ են Ձեր իրական

մտադրությունները և ամեն կերպ առիթ էք փնտրում վիրավորելու ռեկտորին և ցույց տալու, որ այդ ամենի մեղավորը ռեկտորն է:

Հարկ եմ համարում Ձեզ հիշեցնել, որ ռեկտորի գործունեության գնահատական տվողը կառավարման խորհուրդն է, այլ ոչ թե Դուք, իսկ քաղաքական Ձեր շահարկումները որևէ հիմնավորում չունեն, քանի որ խորհրդի կազմում նաև գործող իշխանության ներկայացուցիչներ են, իսկ մենք կրթական գործունեություն ենք իրականացնում, այլ ոչ թե քաղաքական:

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

 Недействительная подпись

X 

Подписано: GHUKASYAN ARTUSH 4007580189

Կատարող՝

Ա. Հովհաննիսյան

Հեռ. 094081908